ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՊՐ. Ա. ՔՈՉԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Սուրբ Էջմիածնում գումարված Հայաստանյայց Եկեղեցու Ազգային-եկեղեցական ժողովը հաջողությամբ ավարտեց իր աշխատանքները:

Ազգային-եկեղեցական սրբազան ժողովը իր խորին երախտագիտությունն ու շնորհակալությունն է հայտնում Սովետական Հայաստանի բարեխնամ կառավարությանը այն դյուրություններեի համար, որոնք ընձեռվեցին Ազգային-եկեղեցական ժողովի գումարման և անցկացման համար:

Հայրենի բարեխնամ կառավարության ջերմ հոգատարությունը դեպի Սուրբ Էջմիածինը անսահման սիրով և խորունկ երախտագիտությամբ է լցնում յուրաքանչյուր պատգամավորի և ամեն մի հայ մարդու սիրտը դեպի մեր վերածնված Մայր Հայրենիքը և նրա հարապատ կառավարությունը:

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

5 հոկտեմբերի 1962 թ.